Արձանագրություն N 2

ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար տավարի ականջների պիտակների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

04 փետրվարի 2022 թ.
ժամը 15:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ. Կարապետյանը, անդամներ՝ Մ. Խաչատրյանը, Գ. Մարգարյանը, Մ. Ավագյանը, Լ. Սարգսյանը և քարտուղար՝ Վ. Նավասարդյանը:

Օրակարգ

ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պարզաբանման մասին

ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/80 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Մ. Կարապետյանը նիստը հայտարարեց բացված և տեղերկացրեց, որ /eauction.armeps.am/ համակարգի միջոցով 2022 թվականի փետրվարի 02-ին ստացվել է պարզաբանման հարցում:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց պարզաբանել, մասնավորապես՝

Հարց 1) - իգական և արական կցամասերի երկարությունները ներառու՞մ են միացման հատվածը, թե ներկայացված է տեքստային մասի չափսերը:

Պատասխան 1) իգական և արական կցամասերի երկարությունները ներառում են միացման և տեքստային հատվածը միասին: Տեխնիկական բնութագրով ներկայացված պահանջը ականջապիտակի ընդհանուր երկարությունն է:

Հարց 2) - Հնարավորության դեպքում խնդրում եմ կցել էսքիզ, որտեղ ներկայացված կլինեն չափսերը:

Պատասխան 2) Կենդանիների հաշվառման միջազգային կոմիտեի (ICAR) պաշտոնական կայքում տեղադրված են բազմաթիվ նմանօրինակ ականջապիտակներ:

Հարց 3) - Ի՞նչ ի նկատի ունեք, երբ նշել եք «մեկ հատը դիտարկում է մեկ զույգ», այսինքն մեկ հատը ներառում է 1 հատ արական և 1 հատ իգական կցամաս, թե՞ 2 ականջի համար նախատեսված համապատասխանաբար 2 հատ արական և 2 հատ իգական կցամասեր:

Պատասխան 3) - մեկ զույգ /մեկ հատ/ ականջապիտակը բաղկացած է 2 մասից /կտորից/ «իգական» և «արական» կցամասերից՝ կենդանու մեկ ականջի համար: Գնման պահանջը 1 600 000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) հատը՝ /զույգ/ 800 000 (ութ հարյուր հազար) գլուխ խոշոր եղջերավոր կենդանու համար: Այսպիսով, մեկ հատը դիտակվում է մեկ զույգ, մեկ կենդանու համար անհրաժեշտ է երկու զույգ կամ երկու հատ ականջապիտակ՝ աջ և ձախ ականջների համար:

Հարց 4) - Ի՞նչ է գրվելու արական և իգական կցամասերի առաջին տողում: Նշված է. ««իգական» և «արական» կցամասերի վրա պետք է նշված լինի Հայաստանի Հանրապետություն՝ «AM» և միևնույն իննանիշ չկրկնվող նույնականացման անհատական համարը, որի վերջին թիվը վերստուգիչ համարն է»: Խնդրում եմ մանրամասնել, ի՞նչ է

նշանակում վերստուգիչ համար, ի՞նչն է վերահսկվելու վերջին թիվը 0-9 փոփոխելով: Ի՞նչ բանաձևի մասին է գնում խոսքը:

Պատասխան 4) - «իգական» և «արական» կցամասերի առաջին տողում կարող է գրված լինի, օրինակ՝ «AM» կամ «AM» և իննանիշ թվերից երեք նիշը, կամ ոչինիչ: Ականջապիտակի դիզայնը՝ ըստ հայացողությամբ: Միաժամանակ առաջարկվում է ուսումնասիրել ICAR-ում առակա ականջապիտակների դիզայնը: Վերստուգիչ համարը մաթեթաթիկական ալգորիթմով (բանաձևով) կապված է մնացած բոլորի թվերի հետ: Կիրառվում է մուտքերի ժամանակ սխալվելու հավանականությունը նվազեցնելու նպատակով: Օրինակ, եթե ականջապիտակի համարի մեջ մեկ թիվ սխալվեն համակարգը կհասկանա, որ այդ ականջապիտակի համարի կոմբինացիան գոյություն ունենալ չի կարող: Մաթեմաթիկական ալգորիթմը (բանաձև) կտրամադրվի հաղթող ճանաչված և պայմանագիր կնքված ընկերությանը:

Հարց 5) – Նշված է. «ականջապիտակի կորստի դեպքում՝ մատակարարը գնորդի կողմից նախապես տրամադրված հերթական համարակալման ցուցակի հայտը էլ. Փոստի միջոցով ստանալուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է տրամադրել նոր ականջապիտակ՝ կորսված ականջապիտակի նույնականացման համարով, կորստի դեպքում վերականգնված ականջապիտակները կհաշվարկվեն պատվիրված ականջապիտակների ընդհանուր թվաքանակի մեջ» Խնդրում եմ կոնկրետացնել, ի՞նչ կորստի մասին է խոսք գնում, ու՞մ մեղավորությամբ է կորուստը ենթադրվում:

Պատասխան 5) – կորուստը կարող է բխել տարբեր հանգամանքերից և որևէ անձի նկատմամբ մեղավորության պարզաբանում տվյալ պարագայում չի ենթադրվում: Հարկ է նշել, որ կորստի դեպքում վերականգնված ականջապիտակները կհաշվարկվեն պատվիրված ականջապիտակների ընդհանուր թվաքանակի մեջ, այսինքն 1 600 000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) հատի մեջ:

- հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2022 թ. փետրվարի 18-ին ժամը 12:00-ին, ՀՀ էկոնոմիկայի նախարարության վարչական շենքում, ՀՀ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5, 8-րդ հարկ, 809 սենյակ հասցեում:

<u>Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:</u>

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Մ. Կարապետյան

անդամներ _____ Մ. Խաչատրյան

_____ Գ. Մարգարյան

_____ Մ. Ավագյան

_____ Լ. Սարգսյան

քարտուղար _____ Վ. Նավասարդյան